ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը:**

1) խա-կանք, հա-շտակել, ս-ղթնել, քարակո-
2) պա-սիմատ, շ-երթ, դիցու-, բազրի-
3) կշտա-բել, ա-պաճույճ, ա-բարտակ, ա-փոփել
4) լեգ-ն, Նապոլ-ն, ամ-բա, մեդալ-ն

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) հարավ(ամերիկյան), ի(լրումն), վեց(ամյա)
2) մեծ(բրիտանական), վեր(հանում), քչից(շատից)
3) գեր(տերություն), մաս(մաքուր), փոխ(վարչապետ)
4) մեկ(մեկու), տարեց(տարի), գիտա(հետազոտական)

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն մեկ բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ, ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
2) ՊԱՅՃԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ
3) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ, ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ, ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵ
4) ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ, ՆՈՅԻ ՏԱՊԱՆ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ե*-ն արտասանվում *է*:**

1) ան<u>ե</u>րես, ինքնա<u>ե</u>ռ, տասն<u>ե</u>րեք
2) համ<u>ե</u>րկրացի, նախ<u>ե</u>րգանք, մակ<u>ե</u>րիկամ
3) հոր<u>ե</u>ղբայր, կիսա<u>ե</u>փ, ապ<u>ե</u>րախտ
4) գետ<u>ե</u>զր, վեր<u>ե</u>լք, վրա<u>ե</u>րթ

5 **Ո՞ր շարքում *չկա* բառ, որում *ի*-ն հնչյունափոխվել է *յ*-ի:**

1) օթյակ, տասնյակ, կղզյակ
2) խոյակ, լուսնյակ, ալյակ
3) նաիրյան, ոսկյա, քառյակ
4) հարյուրյակ, սարյակ, հոգյակ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) երկյուղել, զարհուրել, սոսկալ, սարսափել
2) փոս, վիրապ, քիվ, խրամատ
3) բիլ, լուրթ, երկնագույն, մուժ
4) պչրել, ծեքծեքել, սեթևեթել, սքողել

7 **Ո՞ր տարբերակում է *իսկ* բառը մյուսներից տարբեր իմաստ արտահայտում:**

1) Այդ դժվար հարցը հայրդ իսկ չի կարող լուծել:
2) Անցել են դարեր, դարեր, իսկ իր կամքը դեռ խոսում է:
3) Ամպերն են թռչում կապույտ երկնքով, իսկ շուրջը՝ դաշտերն անծիր ու անծիր:
4) Իսկ Սմբատի սրտում արդյոք կա՞ զգացում այդ աղջկա նկատմամբ:

8 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված տրված բառերն ու դրանց բացատրությունները նշող տառերն ու թվերը:**

ա. թավուտ	1. արևազուրկ, ստվերոտ տեղ
բ. կղմինդր	2. խիտ թփերով ու մացառներով պատված տեղ
գ. ծմակ	3. թրծած աղյուս
դ. սողնակ	4. դուռը փակելու ձող
ե. տավիղ	

1) ա-1, բ-3, գ-4, ե-2
2) ա-2, բ-3, գ-1, դ-4
3) ա-1, գ-2, դ-3, ե-4
4) ա-2, բ-1, դ-4, ե-3

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) ցուցանիշ, մակբայ, շաքարեղեգն, շքադուռ
2) լաստանավ, ձկնկիթ, մարդամոտ, լրատու
3) արոտավայր, գլամարտ, հանքատեր, բքաշունչ
4) ասուլիս, սրտատրոփ, վերնաշերտ, շուրջառ

10 **Ո՞ր շարքում *-ե* վերջածանց ունեցող բառ կա:**

1) աշտե, հանրաքվե
2) ոստրե, որևիցե
3) ափսե, երե
4) հյուլե, լուսե

11 **Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ *չկա:***

1) Պետրոսի գալուց հետո մայրն իրեն լիակատար երջանիկ պիտի զգար:
2) Հեքիաթային երազը դեռ նոր էր սկսվել, երբ հանկարծ լսեց մի ահասարսուռ ձայն:
3) Զորքը իսկույն բաժանվում է մասերի, որպեսզի ծառուղիներով անցնելու ժամանակ զինվորներն իրար չխանգարեն:
4) Գիշերը տուն մտնելիս նա որոշեց անհանգստություն չպատճառել տնեցիներին և կամացուկ գնաց իր սենյակը:

12 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ.**

1. դրամահատ, 2. ստուգայց, 3. նիզակակիր, 4. լրագիր, 5. ջրաշիթ, 6. աշխատավարձ, 7. պատշար, 8. աստղագետ, 9. ատամնաշար:

1) 2, 3, 6, 7, 8
2) 2, 4, 5, 6, 9
3) 1, 2, 4, 5, 7, 9
4) 1, 3, 5, 6, 8

13 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

1) Ողբում եմ դառը վիճակդ տխուր, ո՛վ իմ վիրալից, խոցված հայրենիք:
2) Եվ վերքդ պոկի՛ր, տու՛ր ինձ, սիրելի՛ս, գոտեպնդվի՛ր և խրոխտ ու վես կոչնակդ հնչեցրո՛ւ:
3) Ամեն երևույթ իր պատճառն ունի, և մահկանացուներս կանգնած ենք պատճառների սանդուղքի մի անհայտ աստիճանի վրա:
4) Ավա՜ղ, խավարն ու չարը դժնյա և աշխարհիս գոռ հզորների սուրն ու բռունցքը խորտակեցին քեզ:

14 **Ո՞ր նախադասության մեջ բայի խոնարհման սխալ ձև *չկա:***

1) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:
2) Ալիքները հսկա սառցաբեկորները թոցրեցին դեպի ծովի խորքը:
3) Սարի հետևում հանգչել էին վերջին շողերը, երբ մենք շարժվեցինք դեպի վրանները:
4) Ծովի մեղմօրոր ալիքները դիպչեցին նրա մերկ սրունքներին, և նա սրթսրթաց:

15 **Ո՞ր նախադասության մեջ կապ կա:**

1) Առավոտ ծեգին նա կանուխ էր վեր կենում:
2) Իսկույն նեթ առաջ է գալիս մի շատ ցավալի պատկեր:
3) Կնստեր իր տեղը, կկոթներ հոնի կարմիր մահակին:
4) Դողդոջուն ձեռքեր նետվեցին դեպի Լուսավորչի աջը:

16 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը նախադասություն:**

1) Ինքը բժիշկ էր՝ մի փոքրիկ թագավորության տեր, <u>**մենք՝ այդ թագավորության բնակիչները**</u>:
2) Նա <u>**չգիտես ինչ**</u> է փնտրում այս կյանքում:
3) Ոչ ոք չէր ուզում անցած ճանապարհը վերագնահատել և <u>**հետևություններ անել**</u>:
4) Ամեն երեկո՝ <u>**աշխատանքից տուն վերադառնալիս,**</u> մտնում էր խանութ:

17 **Ո՞ր նախադասության մեջ որոշիչ *չկա:***

1) Ասում են՝ իբր կապույտի վրա Չեն նստում ճանճեր:
2) Կանգնած է վարժապետ Սողոն՝ մտքերի մեջ խորասուզված:
3) Նա շրջում էր ցնցոտիներով, որոնք հազար տեղից կարկատված էին:
4) Հայկական խոհանոցը շատ է դուր գալիս զբոսաշրջիկներին:

18 **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

1) Ու նայում եմ ես դեպի ցած, Ուր դաշտերն են մրափում:
2) Իսկ հիմա ահա կանգնել ես ինձ մոտ, Նախատում ես ժպիտով տխուր:
3) Նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:
4) Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով իջան արևոտ արտերի վրա:

19 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Այդ նշանավոր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին Պալե-Ռոյալ մտավ մի երիտասարդ ճիշտ այն րոպեին, երբ խաղատները բացվում էին՝ համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է անխուսափելի դարձած կիրքը:
2) Այդ միջոցին, երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզնից խլում է ձեր գլխարկը, որպեսզի դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր խաղի մեջ խլելու են ձեր գումարը:
3) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի սյուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը րոպե առ րոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:
4) Մի՞թե կրոնական որևէ հույզ, հոգածության որևէ նշույլ չկա այդ վերաբերմունքի մեջ, որ շռայլվում է սիրած էակի նկատմամբ, որը դեռ չի կարող այն գնահատել:

20 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ *չկա:***

1) Խորհրդավոր հայացքով ակնդետ դիտում էր ծովի՝ ցամաքից հազիվ երևացող հեռուները:
2) Հանրահայտ ֆուտբոլի իսպանական ակումբները մեծ գումարներ են ծախսում լավագույն խաղացողներ ձեռք բերելու համար:
3) Հանցագործության վայրում գտնվել է հնամաշ տղամարդու վերարկու:
4) Աշխարհի գեղասահքի առաջնություններում ռուս մարզիկները միշտ պատշաճ մակարդակով են հանդես եկել:

21 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Նա վերցրեց դաշույնը, որ մի պահ փայլեց կրակի ցոլքերից, ու սկսեց քայլել ափին զուգահեռ:
2) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույգը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ զառիվեր, այնուամենայնիվ, նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամրոց հասնի մի քանի վայրկյան առաջ:
3) Այդտեղ էր և պալատական բանաստեղծը, որը, երգելով Ֆաթիմի հաղթանակներն ու փառահեղ գործերը, արժանացել էր նրա ջերմ համակրանքին:
4) Ինչ էր ուզում դրանով ասել՝ այդպես էլ չհասկացա:

22 **Ո՞ր նախադասությունն է գրաբարով**:

1) Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կու տայ:
2) Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝ Տեսանելով այսպես սեր՝ Դեպի թշվառ մի հայրենիք, Որ ոտնակոխ եղած էր:
3) Շուշանն շողէր հովտին, շողշողէր դէմն արեգականն:
4) Տե՛ր արքա, ավելի կմեղանչես, երբ գահդ թափուր թողուս, որուն վրա միշտ հառած են Պարսկաստանի արյունռուշտ աչքերը:

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Անգլիական մի վիճակագրություն ցույց է տալիս, ……:

1) լոնդոնյան գողությունների իրական պատճառը
2) թերևս Լոնդոնում գողությունների պատճառը քաղցն է
3) Ժան Վալժանը գողություն էր կատարել քաղցի պատճառով
4) որ Լոնդոնում հինգ գողությունից չորսի անմիջական պատճառը քաղցն է

24 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում դրանց տրամաբանական ճիշտ հաջորդականությանը:**

1. Զարմանալ կարելի էր միայն, որ կենդանիները այդ արգելքը հաղթահարեցին և՛ բաց, և՛ փակ աչքերով, այսինքն՝ նրանք մթության մեջ կողմնորոշվեցին ոչ տեսողությամբ:
2. Կատարվեց գիտափորձ. մի մութ սենյակում զանգակներով մետաղալարեր տեղադրվեցին, որոնք մեծ խտությամբ զբաղեցնում էին սենյակի օդային ողջ տարածքը, և թեթև հպումը մետաղալարին առաջացնում էր ուժեղ ղողանջ:
3. Մարդկանց երկար ժամանակ զարմացնում էր մթության մեջ չղջիկների կողմնորոշ-վելու ունակությունը:
4. Հաջորդ փորձն արվեց այլ կերպ. փակեցին նրանց ականջները, և վերջապես լսվեց զանգի ղողանջ. այսինքն՝ մթության մեջ նրանք «տեսնում էին ականջներով»:

1) 3, 4, 1, 2
2) 4, 1, 2, 3
3) 3, 2, 1, 4
4) 4, 3, 2, 1

25 **Ո՞ր հերոսի խոսքերն են:**

Մինչ դու գնացեր
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց ո՞ւմ թագաւորեմ:

1) Արտավազդի («Արտաշես և Արտավազդ»)
2) Արա Գեղեցիկի («Արա Գեղեցիկ և Շամիրամ»)
3) Տիգրանի («Տիգրան և Աժդահակ»)
4) Հայկի («Հայկ և Բել»)

26 **Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Աստղ մ՚ալ ես կ՚երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թրռին այրել ճակատն երկնքին:

1) «Տրտունջք»
2) «Իմ ցավը»
3) «Լճակ»
4) «Սիրել»

27 **Ի՞նչ ճակատագիր է ունենում Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի՝ իրավաբանություն ուսումնասիրող երիտասարդը:**

1) Հայտնի փաստաբան դառնալով՝ կարողանում է վրեժ լուծել իրեն դավաճանած աղջկանից:
2) Դառնում է հարբեցող և զանազան մութ գործեր պաշտպանող փաստաբան:
3) Մերժված սիրո պատճառով հուսահատությունից ինքնասպան է լինում:
4) Կիսատ թողնելով իր ուսումնառությունը՝ վերադառնում է հայրենի քաղաք, որպեսզի վրեժ լուծի սիրած աղջկա ամուսնուց:

28 ***«Դանայան տակառ»*** **արտահայտությունը Գ. Զոհրապի ո՞ր նովելում է գործածվել ու դարձել համեմատության եզր:**

1) «Ճիտին պարտքը»
2) «Զաբուղոն»
3) «Այինկա»
4) «Փոստա՛լ»

29 **Ո՞րն է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր նպատակադրումը:**

1) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
2) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատունների անտարբերությունը ցույց տալը
3) ազգի մեծահարուստ մարդկանց բթամտությունը ցույց տալը
4) գլխավոր հերոսի ամուսնության ճախողման վերաբերյալ զվարճալի պատմություն ստեղծելը

30 **Ա. Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողով.**

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»:

1) «Աբու-Լալա Մահարի»
2) «Ռավեննայում»
3) «Սաադիի վերջին գարունը»
4) «Հավերժական սերը»

31 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոհերն են.**

«Ե՛ս իմ ընդդիմադրության համար դատապարտվեցա և աքսորվեցա… Բայց նախախնամության աջը երկար չի թողնի աքսորյալին այստեղ… Երբ նա ոտք կդնե հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, նենգավո՜ր Բյուզանդիոն…»:

1) Ներսես Մեծի
2) Արշակ Երկրորդի
3) Սահակ Պարթևի
4) Վասակ Մամիկոնյանի

32 **Ո՞ր տողերի հեղինակը Վ. Տերյանը *չէ:***

1) Եվ հավատացինք, հարբած ու գինով,
   Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի:
2) Իջնում է գիշերն՝ անգութ ու մթին,
   Եվ այգը բացվում՝ դառն ու մահահոտ:
3) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
   Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
4) Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ
   Պատել, պայծա՛ռ Նաիրի:

33 **Ո՞ր բառերում սղում կա:**

1. եզրային, 2. կապուտաչ, 3. ծնրադիր, 4. ոսկերիզ, 5. բարենպաստ, 6. երկրաբան, 7. ալրաղաց, 8. պտղամիս

34 **Ո՞ր բառերում մեկից ավելի ածանց կա:**

1. բամբակենի, 2. անպարտելի, 3. միջնորմ, 4. վարչական, 5. գիտնական, 6. ապուշություն, 7. ուսուցիչ, 8. կանոնավոր

35 **Ո՞ր նախադասություններն են միակազմ:**

1. Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ, Չեմ հասկանում՝ դեպի ուր:
2. Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անց կացավ:
3. Քայլե՜լ ու քայլե՜լ, թափառե՜լ մենակ աշխարհի փոշոտ ճանապարհներին:
4. Պտուղը ծառից են ճանաչում:
5. Կախարդվածի պես կանգնած Տնե՜ր, տնե՜ր ավերակ:

36 **Տրվածներից որո՞նք են ածական:**

1. մշտապես, 2. բաղձալի, 3. ամեննին, 4. վայելուչ, 5. մկանուտ, 6. առաջնային, 7. այսպիսի, 8. զարմացած

37 **Ո՞ր նախադասություններում ձևի պարագա կա:**

1. Մի վարձկան գարեհաց էր ուտում՝ ագահաբար կուլ տալով պատառները:
2. Բուռոսը խանդաղատանք էր ապրում այդ տեսարաններից և շնչում ռազմական ճամբարի առնական սուր հոտը:
3. Նա ուղևորվեց այնտեղ, ուր ծածանվում էր կապույտ դրոշը. դա հեծյալների ճամբարն էր:
4. Նրա նժույգը դանդաղ գնում էր դեպի ճամբար, որտեղ տեղավորված էր Հռոմի մոտակայքում գտնվող հավաքակայանը:
5. Պատերազմից հետո շատերը, մուրացիկի պես ձեռքները անցորդներին պարզած, կանգնում էին եկեղեցու դռան մոտ:

38 **Նշել այն համարները, որոնց տեղում բուք պիտի դրվի:**

Մշուշը լեռներից կիրճն էր իջել(1) թավալգլոր լցվելով ձորը: Լեռների գլխին հիմա մռայլ ամպեր էին ճոճվում իսկ արևը թաքնվելով ցրիվ ամպերի հետևում(2) ծիկրակում էր(3) հրաշք էր: Ծառի շուրջբոլորը ողողված էր արևով իսկ քիչ այն կողմ(4) ստվեր էր(5) խոնավ ու մութն առած: Լույսը ստվերն էր շեշտել ստվերը(6) լույսը և թվում էր(7) ծառի շուրջբոլորը ծիածաններ էին քանդվում ու հյուսվում: Իսկ ներքևի կածանում լույսը տարուբերվելով(8) կարծես պահմտոցի էր խաղում:

39 **Բառերից քանիսո՞ւմ է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված (տվյալ տեղում գաղտնավանկ *չկա*):**

կ(ը)ռթնել, մկ(ը)րտել, մարմ(ը)նական, ձեռ(ը)նբաց, խ(ը)նդրանք, հագն(ը)վել, զն(ը)նել, գտ(ը)նվել

40 **Բառերից քանիսի՞ արմատներից որևէ մեկին կարող է միանալ -*ում* վերջածանցը և բառ կազմել առանց 2-րդ ածանցի:**

երկնաձիգ, արյունլվա, թաղապետարան, երկրաշարժ, բազկաթոռ, դրդապատճառ

41 **Տրված բառաշարքում *ինքը* բառի քանի՞ բառաձև կա:**

իրենք, ինքնիրեն, իրենով, ինքնին, իրենց, ինքնուրույն, ինձնից, ինքնակամ

42 **Տրվածներից քանիսո՞ւմ ստորադասական շաղկապով կապված երկրորդական նախադասություն կա:**

- Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճյուղերից պոկում էր դեղնած տերևները:
- Թեկուզ տաք թեյը վառեց մատը, տղան ծպտուն չհանեց:
- Ավին հիմա էլ ողջ է, չնայած սովորական մարմնի վրա գլխի փոխարեն մարդկային գանգ է:
- Արեգակի առաջին ոսկեգօծ շողերն ընկնում են սառած ժայռերին թե չէ, քարակաքավը ինչ-որ որձաքարի բեկորի վրայից սկսում է երգել:

43 **Բառերից քանի՞սն են ենթարկվում *ու* հոլովման:**

վազել, ոչ ոք, երեխա, ամուսին, շանթարգել, կիրակի, կաղին, ուխտատեղի

44 **Պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:**

բաղաձայնույթ, հանգավորում, շրջադասություն, փոխաբերություն

Երբ իջնի գիշերը, ու անցած հուշերը,
Անցածի փշերը դառնորեն խոցեն,
Ո՜րբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջի՜ն մեր սերն է աշխարհում գուցե:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Պատճառական ածանց ունեցող բայերի եզակի հրամայականը կազմվում է ***ու***, իսկ հոգնակին՝ ***եք*** վերջավորությամբ:
2. Բոլոր բայերը կարող են ստանալ *չ* նախածանց:
3. Պատճառական բայերը կազմվում են միայն մեկ եղանակով՝ պատճառական ածանցներով:
4. Բոլոր ածանցավոր բայերը անցյալ կատարյալում ունենում են պարզ բայերից տարբերվող վերջավորություններ:
5. ***Ա*** խոնարհման բոլոր կանոնավոր պարզ բայերի եզակի հրամայականը և ըղձական ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքը նույն վերջավորությունն ունեն:
6. ***Ն, չ*** սոսկածանցավոր կանոնավոր բայերի անցյալ կատարյալը, վաղակատարը, ենթակայականը և հարակատարը կազմվում են տվյալ սոսկածանցների անկումով:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Հեռվից խաղալով ու խայ-ալով(1) վազում էր սպիտակ ձին: Քամին փ-փռացնում(2) էր բաշը, և ձին լայն կր-քով(3) ճեղքում էր լեռնային օդի ալիքները: Արևը ոսկ-որել(4) էր ձիու արծաթաձույլ ասպանդակները, պողպատյա պախուր-ը(5): Թվում էր՝ գո-շ(6) ամպերի պատվանդանից պոկվել է մարմարե մի հեծ-լ(7) և սրընթ-աց(8) արշավում է որպես չքնաղ տեսիլք:

1) 1-տ, 3-ծ, 6-ր, 8-թ
2) 1-տ, 4-և, 5-ձ, 8-թ
3) 2-ր, 4-և, 6-ր, 7-յա
4) 2-ռ, 3-ծ, 5-ձ, 7-յա

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) քննություն, ստախոս, ձնաբուք, դիպաշար
2) ըմպանակ, ատենակալ, տխրություն, միջանցք
3) դիտարկում, փութկոտ, իջնել, գրախանութ
4) ծանրորդ, ըղձալի, կատվառյուծ, սիրասուն

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) քրմապետ, սպառազեն, օժտվածություն
2) ամրոց, ավշանյութ, մրցանակ
3) ճշտապահ, դեռափթիթ, վայրկենական
4) լցոնել, նկարչական, ապաքինում

49 **Ո՞ր բառն է որին հականիշ. բառերը նշող տառերի ու թվերի համապատասխանեցման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. սինլքոր	1. վեհերոտ
բ. հանդուգն	2. վեհանձն
գ. ճապաղ	3. սեղմ
դ. ժիր	4. հեղգ

1) ա-2, բ-1, գ-3, դ-4
2) ա-2, բ-4, գ-3, դ-1
3) ա-3, բ-1, գ-2, դ-4
4) ա-3, բ-4, գ-2, դ-1

50 **Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:**

1) **կոտր ընկնել** – հակառակվել
2) **մազը գերան դարձնել** – չափազանցնել
3) **գառան մորթի հագնել** – միամիտ ձևանալ
4) **խաղաթղթերը խառնել** – ծրագրերը խափանել

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա փակագծերում նշված ածանցը:**

1) պարագիծ, անպարփակ, բազմապարունակ, պարախումբ *(**պար(ա)-** նախածանց)*
2) բաղդատելի, բաղակցել, բաղադրիչ, բաղաձայն *(**բաղ(ա)-** նախածանց)*
3) մանրադիտակ, ցուցատախտակ, լեզվակ, աղյուսակ *(**-ակ** վերջածանց)*
4) դյուրին, աղախին, ստորին, առաջին *(**-ին** վերջածանց)*

52 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն ընդհանուր արմատ ունեն:**

1) հնամենի, հնավանդ, հնագետ, հնէաբան
2) սնամեջ, սնապարծ, սնդուկ, սնոտի
3) ուղեկալ, գործուղում, ուղեցույց, խճուղի
4) ծառաբուն, բնաբան, բնույթ, բնորոշ

53 **Ո՞ր տարբերակում ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Հենց Ազազելլոն հեռացավ, կատվի աչքն ընկավ մեկին, որ, հասկանալով իր մոտալուտ վախճանը, հանկարծ իր վրայից գցեց պատմուճանը, շպրտեց հատակին ու նետվեց սանդուղքն ի վար՝ շնչասպառ լինելով իրեն հետապնդողների ձայներից:

1) **հենց** – վերաբերական, **հեռացավ** – անցյալ կատարյալ
2) **որ** – ստորադասական շաղկապ, **հասկանալով** – անորոշ դերբայ
3) **հետապնդողների** – ենթակայական դերբայ, **մոտալուտ** – ժամանակի մակբայ
4) **վրայից** – հետադիր կապ, **հատակին** – որոշյալ առում

54 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

1) նույնքան, սույն, միմյանց, ոմն
2) մի քանի, ոչ ոք, ամենայն, մինչև իսկ
3) ուրիշ, ինչ-ինչ, համայն, փոքր-ինչ
4) նույնիսկ, որոշ, քանիերորդ, այստեղ

55 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Ցորենների արտի վրա հրաբորբոք Անցնում է մի երկնային կարմիր մորմոք:
2) Եվ ես արթնացա խնդության ցավից. Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
3) Մի փոքրիկ ցայտաղբյուր զովաշուրթ Իզուր է կանչում՝ ե՞կ ինձ մոտ:
4) Անծիր աշխարհի դժկամ ու դաժան Ուղիների մեջ իմ սերը կորած Էլ չորոնես:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Երիտասարդը վազեց դեպի կառքը և ուղղելով բաճկոնի օձիքը՝ կանգնեց ձգված:
2) Ա՜խ, սինյո՛ր, եթե հնար լիներ, կսովորեի թավջութակ նվագել ու կմտնեի երաժշտական խումբ:
3) Գործ շատ կար. ծրագրեր էի վաճառում, հետևաբեմում աշխատում:
4) Շուտով տղան մեծանում է և դառնում հայտնի արհեստավոր:

57 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Եթե իր դարբնոցն ունենար, հաճախորդներ ինչքա՜ն կունենար:
2) Վառարանի առաջ նստած՝ երգում էր մի հին երգ:
3) Արագ քայլերով ինձ մոտեցավ մի ակնոցավոր մարդ:
4) Այդ դեպքից հետո նա ժամացույց այլևս չգնեց:

58 **Ո՞ր տարբերակում անկանոն բայ *չկա:***

1) Այսօր եղի՛ր քրոջ պես՝ Անչար, մաքուր ու գթոտ. Գրկենք իրար ու նստենք,Նստենք մինչև առավոտ:
2) Երազ աշխարհում Ամեն բան հավետ Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
3) Մինչև Արարատի ստորոտը նրանց հետ գնում է զինավառված հայերի մի հոծ բազմություն՝ բարձր երգելով ու աղաղակելով:
4) Տա՛ր ինձ, քարավա՛ն, իժերի՛ն հանձնիր, թաղի՛ր հեգ սիրտս ավազների մեջ:

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը ճիշտ նշված:**

1) Չէի հավատում, որ երբեմնի վտիտ ու փխրուն այդ աղջնակը այդքան շնորհալի մի դերասանուհի է դարձել: *(ուղիղ խնդիր)*
2) Առավել արդարացի կլիներ, եթե ներկայի փոքրիկ վշտերը մեղմացնեինք անցյալի քաղցր հիշողություններով: *(պայմանի պարագա)*
3) Հաստատվեց ծովափնյա մի փոքրիկ քաղաքում, որտեղ երիտասարդ տարիներին ուսուցչություն էր արել իր հայրը: *(տեղի պարագա)*
4) Նպատակս այն էր, որ այդ ուղևորության ընթացքում այցելեմ նաև օդեսացի ընկերուհուս: *(ստորոգելի)*

60 **Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը սխալ փոխակերպված բարդի:**

1) *Նրա կարծիքով անընդհատ տեղափոխություններիս պատճառը գեղեցիկ տանտիրուհի փնտրելս էր:*
   Նրա կարծիքով ես անընդհատ տեղափոխվում էի, որովհետև գեղեցիկ տանտիրուհի էի փնտրում:
2) *Թշնամուց ճշմարտություն ակնկալողը կանխավ հավատում է ստին:*
   Ով թշնամուց ճշմարտություն է ակնկալում, կանխավ հավատում է ստին:
3) *Ես հետ էի նայում մերձավորներից բաժանվող աքսորականի նման:*
   Ես հետ էի նայում աքսորականի նման, որ բաժանվում է մերձավորներից:
4) *Վերջացնելով իր սովորական աղոթքը՝ տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:*
   Երբ վերջացրեց իր սովորական աղոթքը, տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:

61 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Եկողները հաղթանակ տարած նախարարներն էին հայրենիքի համար բազում ճակատամարտերում թրծված:
2) Չքնաղ է Սևանը տարվա բոլոր եղանակներին թե գարնան արևոտ օրը թե ամռան աստղազարդ գիշերին:
3) Ահա հպարտորեն կանգնած է հայտնի մարզիկը Սմբատ Բագրատունին բնավ չընկճվելով աղմուկ-աղաղակից:
4) Նոյյան հանգրվանը Մասիսը շատ չոր է ու լերկ ոչ ծառ կգտնես նրա լանջին ոչ թուփ:

62 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Զորքի կոտորածը որի մասին մտածելն անգամ վիշտ էր պատճառում նրան թագավորը չէր ուզում հիշել:
2) Հանկարծ մի խենթ քամի բարձրացավ և վայր գցեց նրա ձեռքի գավը ազնիվ գինին հեղելով հողին:
3) Պանինի սարսափը հեռուներում էր տարածված և նրան տեսնելիս սարսռում էին:
4) Աստված զարմացավ հողեղենի մտքի խորությունից և նրան վերադարձրեց խոսելու ունակությունը:

63 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Մարդը ……. նրա ……., ու թեև ……. առաջվա նման զուրկ էր արտահայտությունից, սակայն աչքերը նման էին վիրավոր ……. աչքերի:

(1. հեռանալ, 2. եղնիկ, 3. դիտել, 4. դեմք)

1) 1, 4, 2, 3
2) 1, 2, 4, 3
3) 3, 1, 4, 2
4) 3, 2, 1, 4

64 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Գոյություն ունի անվիճելի մի ճշմարտություն. այս կամ այն ժողովրդի ներկան հասկանալու համար, անհրաժեշտ է իմանալ նրա վաղնջական պատմությունը:
2) Լույս տեսավ Չարենցի նոր ժողովածուն՝ «Գիրք ճանապարհի» վերնագրով, նոր տագնապներ բերելով բանաստեղծի՝ տագնապներով լի առօրյային:
3) Եվ ահա վիմափոր տաճարի դռներից դուրս եկան սպիտակազգեստ դպիրները, նրանց հետևից՝ սարկավագները, իսկ վերջում՝ բարձրաստիճան եպիսկոպոսներն էին ու վարդապետները:
4) Սուրբ Սոֆյայի տաճարը չորս կողմից շրջապատված է մինարեթներով. քրիստոնեական շքեղաշուք տաճարը հետագայում մզկիթի է վերածվել, և կցվել են այդ չորս մինարեթները:

65 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը.**

«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի՝ իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:

1) «Խոնարհ աղջիկը»
2) «Սպիտակ ձին»
3) «Ալպիական մանուշակ»
4) «Միրհավ»

66 **Տրվածներից ո՞րը Հ. Թումանյանի քառյակի առաջին տող *չէ:***

1) Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի
2) Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան
3) Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
4) Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Էյֆելյան աշտարակը կառուցվել է՝ ի պատիվ Ֆրանսիական մեծ հեղափոխության հարյուրամյակի: Աշտարակի առանձնահատկությունը միայն նրա յուրահատուկ տեսքը չէ. այն տարիների ընթացքում ունեցել է նաև մի շարք գործնական նշանակություններ: 19-րդ դարի վերջերին աշտարակը ռադիոհաղորդումների հեռարձակման փորձերի կենտրոն էր, իսկ 1922 թ. այստեղից հաղորդվեց առաջին ռադիոհամերգը: Երեք տարի անց աշտարակից կատարվեց հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը: Բացի հեռարձակումներից, աշտարակը ծառայել է նաև տարատեսակ փորձերով օդերևութաբանական շատ հարցեր ուսումնասիրելուն:

Բուն աշտարակի բարձրությունը 300 մետր է: Իհարկե, ժամանակին նման բարձրությունը ռեկորդային էր, բայց այսօր աշխարհի շատ քաղաքների՝ անհամեմատ ավելի մեծ բարձրություն ունեցող բազմաթիվ շինությունների կողքին այն այլևս չի ապշեցնում: Ներկայումս էլ Էյֆելյան աշտարակն իր ուրույն գրավչության շնորհիվ մնում է զբոսաշրջիկների նախընտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլիոն մարդ է այցելում:

Շնորհիվ 2022 թվականին աշտարակի վրա տեղադրված նոր ալեհավաքի, որը հնարավորություն է տալիս թվային ռադիոհաղորդումներ հեռարձակելու՝ նրա բարձրությունն այսօր կազմում է 330 մետր:

1. Էյֆելյան աշտարակից է տրվել ֆրանսիական առաջին ռադիոհաղորդումը:
2. Աշտարակը կառուցվել է օդերևութաբանական բոլոր երևույթները ուսումնասիրելու նպատակով:
3. Սկսած 20-րդ դարի 20-ական թվականներից՝ Էյֆելյան աշտարակից այլևս հեռարձակումներ չեն արվում:
4. Էյֆելյան աշտարակը դեպի իրեն է գրավում միլիոնավոր զբոսաշրջիկների հատկապես իր՝ մինչև օրս չգերազանցված բարձրության շնորհիվ:

68 **Ո՞ր նախադասություններում ուղիղ խնդիր կա:**

1. Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները:
2. Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի հինավուրց գագաթները:
3. Քարափոր տների երդիկներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը:
4. Գարնան մթնկա գիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է սփռում գետափի տներում, ձորերում:
5. Մթության մեջ առկայծող աստղերը կախարդական կանթեղներ են թվում:

69 **Ո՞ր նախադասություններում սահմանական եղանակի բայաձև կա:**

1. Հոգնել եմ արդեն հանդարտ հոսելուց, Իմ մտքերի հետ մթում խոսելուց:
2. Ի՞նչ թաքցնեմ, էլ բան չունեմ Ես աշխարհից թաքցնելու:
3. Կրակն այնպես թող ճարճատի, Որ ծիծաղներ ծաղկեն ծալ-ծալ Ակոսներում մեր ճակատի:
4. Որքա՜ն պարզություն կա այս երգի մեջ, Որքա՜ն մանկություն և թախիծ:
5. Այսպես այդ երգը ամեն օր գալիս, Իմ բոլոր հուշերն իրար է խառնում:
6. Ես կուզենայի ստվերն իմ բռնել, Պատառոտել առանց խղճահարվելու:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Մխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Խնդրառությունը դրսևորվում է թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցություններում:
2. Մասնավորող պարագայական բացահայտիչը երբեմն համաձայնում է բացահայտյալին, երբեմն՝ ոչ:
3. Ենթական և ստորոգյալը կապակցվում են համաձայնությամբ և խնդրառությամբ:
4. Համաձայնությամբ կապվող անդամները դրվում են միևնույն դեմքով, թվով և ժամանակով:
5. Հոլովական և խոնարհման վերջավորությունները կապակցման միջոցի դեր են կատարում:
6. ***Հետ, պես, համար, նման*** կապերի հետ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները հանդես են գալիս ոչ թե սեռական, այլ տրական հոլովով: